Պարույր Սևակ

Անվերնագիր 29

Լինում է - չի լինում,- ինչպես հեքիաթներում,-
(Ա՛յն է, որ տատրս էր պատմում ամեն գիշեր),-
Լինում է - չի լինում՝ մեր տան մոտ ու հեռու
Մի գեղեցիկ աղջիկ՝ վարսերը սև:
Լինում է - չի լինում... Միակ որդին մեր տան
(Նման հեքիաթների կրտսեր որդուն)
Սիրո՛ւմ, շա՛տ է սիրում այդ թովիչ աղջկան,
Սիրում է - չի սիրում աղջիկը թուխ...
Հետո, ամեն գիշեր, երբ մութն է թանձրանում,
Տղան թափառում է այգում ամա,
Ուր ծառերի միջից լուսինն է բարձրանում
Եվ թախծո՛ւմ նրա հետ, նրա՛ համար:
Լինում է - չի լինում... Խորհրդավոր լռում,
Վերջանում է սիրո հեքիաթն այստեղ...
-Եղել է - չի եղել,- ինչպես հեքիաթներում,-
Եղե՞լ է, չի՞ եղել,- ես չըգիտե՛մ...

14.V.1946թ.
Երևան